ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ ԳՄ ԳՀԱՇՁԲ-17/01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«13» «07» 2017թ.**
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արմեն Զոհրաբյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Յուրա Մուշեղյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,Վալեր Հոդաբաշյան/ԲԱ/,Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

1. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով՝

- <<Թիվ 28 ՇՄՇ>> ԲԲԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած հայտարարությունը՝ համարել իրականությանը համապատասխանող և հիմք ընդունելով հրավերով սահմանված որակավորման չափորոշիչները հիմնավորող փաստաթղթերը՝
- <<Թիվ 28 ՇՄՇ>> ԲԲԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկից ավելի մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջները ՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին, անգործության ժամկետ սահմանելով սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվելու գործընթաց սկսել սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից՝ 18.07.2017թ. հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, Մարզպետարանի վարչական շենք, N 212 աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ _____ Յու. Մուշեղյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան